ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 44

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-14-ը ապրիլի 2020թ.

Առցանց հարցման միջոցով կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը:

Նիստն անց է կացվել Google հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին ուղարկվել է https://docs.google.com/forms -ով կազմված ձևաչափեր, որոնք հնարավորություն են ընձեռել գիտական խորհրդի անդամներին կարդալ տվյալ հարցի մասին հաղորդումը, ներկայացնել առաջարկություններ և քվեարկել առցանց:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին: **/Զեկուցող՝ Ն. Ղազարյան/**
2. 2020-2021 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի հաստատում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/**
3. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգի հաստատում: **/ Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/**
4. Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրության մեջ: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/**
5. «Համլետ Կարայանի» անվան կրթաթոշակի վերահաստատման մասին: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/**

<u>Օրակարգի առաջին</u> **՝** « Հաղորդում ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին» հարցի վերաբերյալ **Ն.Ղազարյանի** տեքստը ներկայացվում է ամբողջությամբ.

«2011թ. ԵՊՀ-ում գործողության մեջ է դրվել «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը: Ծրագիրը իրականացվում է հնգամյա շրջափուլերով, որոնք միտված են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներուժի զարգացմանը՝ ապահովելով նրա մանկավարժական – հոգեբանական և մասնագիտական հմտությունների շարունակական կատարելագործումը:

Ծրագրի առաջին շրջափուլը ավարտվել է 2016թ., և այժմ շարունակվում է ծրագրի երկրոդ շրջափուլի իրականացումը, որը նախատեսված է 2016-2021թթ. համար: ԵՊՀ ԻՄ-ում ևս իրականացվում են այդ ծրագրով վերապատրաստումներ, որոնց մասնակցում են ԵՊՀ ԻՄ-ի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը /2018-2019թթ.՝ 72 անձ/: Դասընթացներին չեն մասնակցում 60 տարեկանն անց դասավանդողները, թվով 11 հոգի:

Ամփոփելով 2018-2019 վերապատրաստումները կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները.

Ծրագրի կրթական կառուցամասի «Անգլերենը ակադեմիական միջավայրում» մոդուլով կազմակերպված վերապատրաստումներին /անգլերենի A1-A2 մակարդակ/ մասնակցել է շուրջ 29 հոգի: Դասընթացը ավարտվել է քննությամբ, որը հաղթահարել են 20 հոգի:

Առցանց ուսուցման իրականցնելուն ուղղված կարևոր քայլ էր «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում» /Moodle/ դասընթացի կազմակերպումը, որին մասնակցել է 28 հոգի, ովքեր Moodle համակարգում ունեն իրենց դասընթացները և կիրառում են այն ուսանողների հետ աշխատանքում՝ մյուս էլեկտրոնային ռեսուսներին զուգահեռ:

Որակավորման բարձրացման ծրագրի ընդհանուր կամընտրական դասընթացներ մոդուլով 2018-2019թթ. կազմակերպել է 2 դասընթաց.

1. «Կրթական հետազոտությունները բուհական համակարգում» դասընթաց: Այն վարել է Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի տնօրեն, կրթության փորձագետ՝ Մարինա Գալստյանը: Երկօրյա դասընթացին մասնակցել է 23 հոգի:

2. «Առարկայական ծրագրեր մշակելու ABC մոտեցում» թեմայով դասընթաց, որը վարել է կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը: Երկօրյա դասընթացին միջինում մասնակցել է 31 հոգի:

2018-2019թթ. կազմակերպվել է նաև 2 դաս-քննարկումներ, որոնք վարել է կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը:

1.«Կրթության ժամանակակից խնդիրները» դաս-քննարկմանը մասնակցել է 43 հոգի:

2.«Ինչպե՞ս է սովորում մարդը» դաս-քննարկմանը մասնակցել է 37 հոգի:

Մասնաճյուղում շարունակվում են որակավորման բարձրացման ծրագրով վերապատրաստման աշխատանքները և իրականացվում են նաև ծրագրի՝ վերանայված կրթական կառուցամասում ներառված «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի դասընթացները»:

Մասնակիցների կողմից արված առաջարկները.

Մ. Ճաղարյան – Անհրաժեշտ է կազմակերպել ժամանակակից առցանց տարբեր համակարգերին վերաբերող դասընթացները, որովհետև խնդիր ունենք հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման առումով:

Վ.Ավագյան - Նմանօրինակ դասընթացներ արդեն կարելի է կազմակերպել առցանց՝ օգտագործելով արդեն բոլորիս ծանոթ հեռավար հնարավորությունները: Դա թույլ կտա ընդարձակելու դասընթացների շրջանակը:

Ա.Հովակիմյան - Վերապատրաստման ծրագրերում ներառել մոդուլներ մասնագիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

Վ. Աղաբաբյան - Դասընթացները անցկացնել, երբ չկա դասապրոցես:

Առցանց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ 44/1

- Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «2020-2021 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի հաստատում» հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը հետևյալն էր.

«ԵՊՀ ԻՄ-ի 2020թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի կրթական ծրագրի վարձավճարների հարցը քննակվել է նաև տնօրինության նիստում: Փոփոխություններ են առաջարկվել 5 կրթական ծրագրի վճարաչափերում: Հաշվի առնելով Ուսումնամեթոդական վարչության կողմից այլ բուհերի հետ իրականացված համեմատական վերլուծությունները առաջարկվել է ընդունելության տեղերը թողնել անփոփոխ, իսկ 5 մասնագիտական կրթական ծրագրերի («Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») համար կատարել ուսման վարձավճարների փոփոխություն՝

1.«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»– 320 հազարից դարձնել 350 հազար ՀՀ դրամ,

2. «Անգլերեն լեզու և գրականություն» -380 հազարից՝ 400 հազար,

3. «Ֆրանսերեն լեզու և գրականություն»- 380 հազարից՝ 400 հազար,

4. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» - 400 հազարից՝ 450 հազար,

5. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» - 350 հազարից՝ 400 հազար:

Ավելի մանրամասն ներկայացված է հավելված 1-ում»:

Մասնակիցների առաջարկները՝

Վ.Ավագյան - «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության վարձավճարը կարելի է թողնել նույնը՝ 380 հազար:

Լ.Ֆլջյան - Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ ԻՄ 2 մասնագիտությունների (դիզայն և դեկորատիվ-կիրառական արվեստ) ավարտական և կուրսային աշխատանքները պահանջում են նյութական և ֆինանսական ծախսեր, որի բեռը կրում է Մասնաճյուղը, ինչպես նաև այդ մասնագիտությունների մասնագիտական դասընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ են նյութեր (ռեկվիզիտ), որոնք անհրաժեշտ է պարբերաբար նորացնել և թարմացնել, Կիրառական արվեստի ֆակուլտետում գործում են քանդակի և կերամիկայի արվեստանոցները, որի կավի գնումը նույնպես կատարում է Մասնաճյուղը և վառարանի շահագործումը նույնպես ֆինանսական բեռ է Մասնաճյուղի համար: Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ում միայն այդ մասնագիտությունները ունեն սպասարկող և ուսումնաօժանդակ անձնակազմ՝ ուսումնական վարպետներ, որոնք, ճիշտ է, չունեն սահմանված գործառույթներ և պարզ չեն նրանց աշխատանքային պարտականությունները, սակայն այդ ֆինանսական բեռը նույնպես կրում է Մասնաճյուղը: Առաջարկում եմ ԵՊՀ ԻՄ 2020 թ-ի առկա ուսուցմամբ ընդունելության դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական ծրագրերի վարձավճարը բարձրացնել առնվազն 50 հազար դրամով:

Հ.Ղարագյոզյան - Չբարձրացնել վարձավճարները, քանի որ սպասվում է տնտեսական ճգնաժամ և ազգաբնակչության եկամուտների կրճատում: Հաշվի առնենք նաև, որ հարկադիր պարապուրդի պայմաններում

համալսարանը կոմունալ ծախսեր, ուսանողական և այլ ծրագրերի կազմակերպման հետ կապված ծախսեր գրեթե չի արել և այդ ժամանակահատվածում դրանց հատկացված գումարի մեծ մասը խնայվել է։ Վարձավճարների բարձրացումը կարող է հանգեցնել դիմորդների թվի համեմատական նվազման (առկա ուսուցման համակարգում)։ Բացի այդ, այլ համալսարանների հետ համեմատությունը դեռևս բավարար հիմք չէ՝ մեր մասնաճյուղում վարձավճարները բարձրացնելու համար, ընդ որում նախորդ տարվա ծախսերի և եկամուտների մասին հաշվետվությունները թույլ են տալիս ենթադրել, որ մասնաճյուղը կարող է նորմալ պայմաններում շարունակել իր գործունեությունը՝ առանց վարձերի բարձրացման։

Առցանց քվեարկությամբ՝ 25 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 44/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել 2020-2021 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերը համաձայն հավելված 1-ի:

Օրակարգի երրորդ՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգի հաստատում» հարցի հետ կապված **Մ. Աթոյանի** հաղորդումը այսպիսին էր.

«2020թ. մարտի 12-ին ԵՊՀ գիտական խորհրդում հաստատվել է «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգը»։

Ըստ կարգի՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական 2-6 դասընթացներում ներմուծվում է հետազոտական աշխատանք, որն իրականացվելու է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով: Հետազոտական աշխատանքի ներմուծման նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Նշենք, որ ԵՊՀ-ում, առաջին կիսամյակում արդեն մեկնարկել էր հետազոտական բաղադրիչի ներմուծման պիլոտային ծրագիրը, որի վերաբերյալ իրականացվել են մշտադիտարկումներ, արվել վերլուծություններ և հետևություններ, որոնք հիմք են հանդիսացել ԵՊՀ համապատասխան կարգի բարելավմանը:

Նշենք, որ սա փոխարինելու է կուրսային աշխատանքներին:

Անհրաժեշտ է ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական պրոցեսը ԵՊՀ-ին համահունչ կազմակերպելու համար առաջնորդվել ԵՊՀ-ի համապատասխան կարգով››

Եղել են հետևյալ առջարկները.

Մ.Ճաղարյան - Ամբողջ կուրսի կուրսային աշխատանքների, կամ հետազոտական աշխատանքների պլանավորման և իրականացման ամբողջ ծանրությունն ընկնում է ընտրված մասնագիտական դասընթացը վարող դասախոսի վրա և ընդ որում՝ դասընթացի ժամաքանակի շրջանակներում: Ինձ թվում է հետազոտության իրականացման, կամ ինչպես գրված է կարգում՝ դասախոսի խորհրդատվության համար այդ դասընթացի ժամաքանակը պետք է ավելացնել և համապատասխանաբար հատկացնել ավելի շատ կրեդիտներ:

Հ.Ղարագյոզյան - Հաշվի առնելով ուսանողների՝ դասերով զբաղվածությունը՝ առաջարկում եմ տարբեր առարկաներից հետազոտական աշխատանքներ գրելու ժամկետներն այնպես սահմանել, որ դրանք չհամընկնեն իրար հետ և ուսանողը կարողանա կենտրոնանալ մեկ

հետազոտության վրա: Առաջարկում եմ նաև հետազոտական աշխատանքի ծավալը սահմանել 7-12 էջ, ոչ ավելի, որպեսզի խորանան ոչ թե զուտ տեսական ինֆորմացիա գրելու մեջ (ինչը հաճախ էջեր լրացնելու միջոց է դառնում միայն), այլ բուն հետազոտության: Առանց այն էլ տեսական մասն այդ առարկայի շրջանակներում, ըստ տրամաբանության, պետք է անցած և յուրացրած լինեն:

Լ.Ֆլջյան - Հաշվի առնելով վերոնշյալը և կարևորելով հետազոտական աշխատանքը կրթական ծրագրերում՝ փաստեմ, որ ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմը ունի հետազոտություն իրականացնելու և ուսանողի հետազոտական աշխատանքը ղեկավարելու փորձ, ինչը ԵՊՀ ԻՄ-ում մասսայական բնույթ չի կրում: Առաջարկում եմ հետազոտական բաղադրիչի ներդրման կարգում ամրագրել, որ մասնագիտական հետազոտական աշխատանք կարող է ղեկավարել միայն այդ դասախոսը, որը ինքը կատարել է նման հետազոտություն և ունի հետազոտական աշխատանք իրականացնելու փորձ:

Ա.Հովակիմյան - Գտնում եմ, որ անհրաժեշտ է ծանոթանալ պիլոտային ծրագրի կատարման արդյունքներին՝ մատնանշելով թե որ մասնագիտությունների համար է այն իրականացվել: Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնում կատարած կուրսային աշխատանքների թեմաները հաճախ ներառված չեն եղել ուսումնական դասընթացներում, սակայն վերաբերել են ոլորտի արդիական ուղղություններին: Ավարտական աշխատանքը որպես կանոն հիմնվել է չորրորդ կուրսում կատարած կուրսային աշխատանքի արդյունքների վրա, ինչի շնորհիվ ապահովվել է ուսանողի հետազոտական աշխատանքի ամբողջականությունը:

Գ.Ավետիսյան - Բակալավրի կրթական ծրագրերում լավ կլիներ լիներ 1 կուրսային աշխատանք, որը իր մեջ պարտադիր կներառեր հետազոտական բաղադրիչ:

Առցանց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 44/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ և 16-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ և 16-րդ ենթակետերով ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Առաջնորդվել 2020թ.-ի մարտի 12-ին կայացած ԵՊՀ գիտական խորհրդում հաստատված Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգով:

Օրակարգի չորրորդ ՝« Փոփոխություններ ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կանոնադրության մեջ» հարցի հետ կապված **Մ. Աթոյանի** հաղորդումը հետևյալն էր.

«ԵՊՀ ԻՄ-ում տեղի ունեցած կառուցվածքայի փոփոխությունների արդյունքում կատարվել է նաև ԵՊՀ ԻՄ-ի տարբեր ստորաբաժանումների գործառույթների հստակեցում, մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ի կայքի տեխնիկական սպասարկման պատասխանատվությունը հանվել է ԱԿԲ վրայից և դրվել է ՏՀՍԶ բաժնի վրա։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ԱԿԲ կանոնադրության մեջ 8-րդ կետի 19) -րդ ենթակետը՝

«19) ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով նրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները,» վերաշարադրել հետևյալ կերպ՝

«19)ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով նրա բովանդակային բաղադրիչները,»

ԱԿԲ-ի ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019թ. հունիսի 1-ի թիվ 38 նիստում հաստատված կանոնադրությունը կարող եք տեսնել հետևյալ հղումով»:

Առցանց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 44/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 2019թ. հունիսի 1-ի թիվ 38 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ԱԿԲ կանոնադրության մեջ 8-րդ կետի 19) -րդ ենթակետը՝ ‹‹19) ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով նրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները,›› ձևակերպել հետևյալ կերպ՝ ‹‹19)ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով նրա բովանդակային բաղադրիչները,››:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի հինգերորդ</u> **՝** ««Համլետ Կարայանի» անվան կրթաթոշակի վերահաստատման մասին»: հարցի հետ կապված **Ա. Դավթյանի հաղորդումը** հետևյալն էր.

‹‹2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում Համլետ Կարայանի անվան կրթաթոշակ է նշանակվել Բնական գիտությունների ֆակուլտետի Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Գերասիմ Սամվելի Ալավերդյանին: Նույն ուսումնական

տարվա երկրորդ կիսամյակում նա պահպանել է իր կարգավիճակը համապատասխան գործող ուսանողական նպաստի, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի: Բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից Գ. Ալավերդյանի թեկնածությունը վերահաստատվել և ներկայացվել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:››

Առցանց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 44/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Վերահաստատել Բնական գիտությունների ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Գերասիմ Սամվելի Ալավերդյանի թեկնածությունը ստանալու Համլետ Կարայանի անվան կրթաթոշակը 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ 2020թ.-ի ապրիլի մեկից սկսած:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ